ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ՋԱՐՈՒՀԻ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՋՆԻՒ ՏԻԿԻՆ ՋԱՐՈՒՀԻ ԴՈԼՈՒԽԱՆԵԱՆ, ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹԻՒՆ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով եւ օրհնութեամբ Մեր ողջոյնն ենք յղում Ձեզ եւ շնորհաւորում շնորհալի ու անուանի հայուհուդ ծննդեան 85-ամեայ յոբելեանական տարեդարձի առիթով:

Մեծազնիւ Տիկին Ջարուհի Դոլուխանեան,

Ուրախ ենք անդրադառնալու, որ Ձեր կեանքի յոբելեանական այս հանգրուանը Դուք դիմաւորում էք երգարուեստի ասպարէզում մեծ վաստակով, ճանաչուած ու սիրուած երաժշտասէր հասարակայնութեան կողմից, ում նուիրել էք Բարձրեալից առատօրէն պարգեւ ստացած երգչուհու Ձեր շնորհները, Ձեր անդուլ ջանքերն ու անմնացորդ սէրը:

Տասնամեակներ շարունակ կատարողական բարձր վարպետութեամբ Դուք աշխարհի տարբեր բեմահարթակներից մատուցել էք դասական երաժշտութեան գոհարները՝ ծառայելով երգարուեստի ճանապարհով բարու արգասաւորմանը մարդկային հոգիներում: Ձեր երգացանկի առանձին մաս են կազմել հայ երաժշտութեան գանձերը՝ իբրեւ վկայութիւն, որ ստեղծագործական Ձեր կեանքն ապրելով Մոսկուայում, Դուք հարազատ զաւակն էք մեր ժողովրդի եւ կրողը նրա հոգեւոր ու մշակութային դարաւոր արժէքների: Վազգէն Ա Կաթողիկոսի հայրապետութեան շրջանից, երբ դեռ նորընծայ սարկաւագ էինք, Մեր յիշողու-

թեան մէջ անջնջելիօրէն փպաւորուած է Սուրբ Պատարագի Ձեր հոգեշաղախ երգեցողութիւնը Մայր Տաճարում:

Երգչուհու Ձեր յաջողութիւնների ու ձեռքբերումների խօսուն վկայութիւններն են պետական ու միջազգային բազում մրցանակները, կոչումներն ու պարգեւները: Մեծ ու գնահատելի է նաեւ Ձեր աւանդը երաժիշտների նոր սերունդ պատրաստելու ոչ դիւրին գործում: Շուրջ երեսուն տարի դասաւանդելով Գնեսինների անուան հանրայայտ մանկավարժական երաժշտանոցում՝ այսօր Երաժշտութեան Ռուսական Ակադեմիայում, Դուք Ձեր սաներին էք փոխանցել ոչ միայն Ձեր բազմափորձ գիտելիքներն ու վարպետութիւնը, արուեստագէտի ճաշակը, այլ նաեւ կրթել էք նրանց երգարուեստի հանդէպ սիրով ու մարդկանց ծառայելու նուիրումով: Այսօր Դուք հպարտութեամբ կարող էք անուանապէս յիշել բազմաթիւ Ձեր սաների, ովքեր քաջածանօթ են երաժշտասէր հասարակութեանը՝ շարունակելով Ձեր աւանդները առաջատար օպերային թատրոնների բեմահարթակներում, յատկապէս՝ Մոսկուայի Մեծ եւ Սանկտ Պետերբուրգի Մարիինեան թատրոններում:

Մեծազնիւ տիկին Դոլուխանեան, երգարուեստի անդաստանում Ձեր աւանդի բարձր գնահատանքով, ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջնորդութեանը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Ամենախնամ Աստուած Իր օրհնութեան մէջ պահպանի Ձեզ եւ պարգեւի քաջառողջ արեւշատութիւն, նոր ուրախութիւններ ու երջանկութիւն: Թող միշտ ուղեկից լինեն Ձեզ Ձեր երկրպագուների ու սաների երախտագիտութիւնն ու սէրը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Յունուարի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 123